

**ՀՀ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ.
ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐ**

Մամվել Հարությունյան, ՀՀ կրթության եվ գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ

2007 թվականին կառավարությունը հաստատեց գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգը. ներկայումս այդ հայեցակարգի համապատասխան հետագա տարիների համար գործողությունների ծրագիր է մշակվում: Իսկ ծրագիրը մշակում է նույնպես 2007թ. հանրապետության նախագահի հրամանագրով ստեղծված Կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն: Կոմիտեի ստեղծումն անհրաժեշտություն էր: Նախ` տարիներ ի վեր կրթության հետ մեկ գերատեսչության մեջ ընդգրկված գիտության ոլորտն օբյեկտիվ պատճառներով պատշաճ ուշադրության չէր արժանանում. կրթության` ստորին օղակներից սկսած բարեփոխումների ընթացքը երկրորդ պլան էր մղել գիտությունը: Բնականաբար, առավել նպատակահարմար կլիներ առանձին նախարարության ստեղծումը: Բայց Կրթության և գիտության նախարարության կառուցվածքում կոմիտեի առանձնացումը համարենք այդ ուղղությամբ առաջին քայլը: Մյուս կողմից, գիտության երեք տարբեր տեսակների կառավարման տարբեր մեխանիզմներ են գործում` ակադեմիական, որը համակարգում է Գիտությունների ազգային ակադեմիան, ճյուղային, որով տարբեր նախարարությունների ենթակայությամբ գործող ինստիտուտներն են զբաղվում, և բուհական: Այս երեք համակարգերի միասնական կառավարման մեխանիզմ գոյություն չունի, ինչը բազմաթիվ խնդիրների պատճառ է դառնում: Խորհրդային շրջանում մեր հանրապետության գիտության բյուջեն շուրջ 400 միլիոն դոլար էր: Ավելի քան 200 միլիոն էլ հատկացվում էր ռազմական մշակումներին: Երևանի ֆիզիկայի ինստիտուտի տարեկան բյուջեն, օրինակ, մոտ 40 միլիոն դոլար էր: Հիմա պատկերացրեք, որ 2008թ. պետական բյուջեով Հայաստանի գիտության ոլորտի հատկացումները 22 միլիոն դոլար են: Այսինքն, կիսով չափ քիչ միայն մեկ գիտահետազոտական ինստիտուտին հատկացված գումարից: Բնարկե, խորհրդային շրջանում մեր գիտության խնդիրներն էլ ուրիշ էին. ուսումնասիրությունների մի հսկայական ծավալ կապվում էր ռազմարդյունաբերական համալիրի հետ: Այսօրվա խնդիրը, հիմնականում, գիտության ծառայեցումն է տնտեսության զարգացմանը: Իսկ ներկայումս խոսքը ոչ միայն միջոցների սղության մասին է. այդ միջոցներն արդյունավետությամբ չեն օգտագործվում: Հետազոտությունները ֆինանսավորվում են Կրթության և գիտության նախարարության միջոցով, իրականում, սակայն, գումարները բաշխում են տարբեր գերատեսչություններ: Ու ստացվել է այնպես, որ ով ավելի ճարպիկ է ու գործունյա, նա էլ «իր վրա է քաշում վերմակը»: Այսպիսով, փոշիացվում են առանց այն էլ սուղ միջոցները: Մինչդեռ գումարների նպատակային օգտագործումը, հուսով եմ, արդյունքներ կապահովի: 22 միլիոնը քիչ է, բայց կրկնում եմ, դա կարելի է և պետք է արդյունավետ օգտագործել: Գիտության պետական կոմիտեն պետք է իրականացնի ողջ ոլորտի վարչական կառավարումը: Եվ մոտեցումն էլ բոլորի նկատմամբ պետք է լինի միասնական: Ակադեմիան պետք է լինի պետության հիմնական խորհրդատուն` գիտության զարգացման հարցերում, այսինքն, զբաղվի բացառապես գիտական հարցերով, ամսագրերի հրատարակությամբ: Ապագայում հնարավոր է, որ Գիտությունների ազգային

ակադեմիային վերապահվեն նաև փորձագիտական գործառույթներ:

Հանձնարարություն ունենք վերլուծել բոլոր գիտական հիմնարկների գործունեությունը: Մինչև հիմա նման բան չի արվել, և բյուջեի միջոցները բաշխվել են ինչպես արդյունավետ գործող, այնպես էլ գրեթե անգործության մատնված ինստիտուտներին: Այսօր միայն Գիտությունների ազգային ակադեմիայի համակարգը ներառում է շուրջ 40 գիտական հիմնարկ, տարբեր նախարարություններին կից գործում է շուրջ 30 ճյուղային ինստիտուտ: Դրան գումար ենք բուհերը և առանձին լաբորատորիաները: Հայաստանի գիտությունը գոյատևում է սահմանափակ միջոցներով, և անիմաստ է այդքան գիտական հիմնարկների գոյությունը, որոնց մեծ մասը ստանում է անմրցունակ արդյունքներ կամ էլ զուտ ձևականորեն գոյություն ունի: Եվս մեկ նկատառում. իրար մոտ թեմատիկայով մեծ թվով հիմնարկներ են գործում, օրինակ, Հայաստանում կա 6 ֆիզիկայի ինստիտուտ: Այսօր անիմաստ է ունենալ նմանատիպ թեմատիկայով զբաղվող մի քանի ինստիտուտ: Կվերլուծվեն գիտական հիմնարկների նյութատեխնիկական բազայի վիճակը, հետազոտությունների թեմատիկան և արդյունքները, մասնագետներով ապահովվածությունը: Այսինքն, կկատարվի համակարգի գույքագրում, որից հետո կծրագրվեն գիտության զարգացման հեռանկարային խնդիրները: Այդ վերլուծությունը հնարավորություն կտա նաև կազմել Հայաստանի գիտական պոտենցիալի հստակ պատկերը, և մենք կարող ենք հիմնավորել ու առանձնացնել գիտության այն ուղղությունները, որտեղից մրցունակ արդյունք է ակնկալվում: Գերակայությունները որոշելու կարևոր գործոն են նաև ճյուղային նախարարությունների պատվերները: Այսօր առնվազն տարօրինակ է ճյուղային ինստիտուտների կարգավիճակը: Պարզվում է, որ 1992թ. հետո դրանցից ոչ մեկը որևէ նախարարությունից պատվեր չի ստացել: Մինչդեռ այդ ինստիտուտները կոչված են իրականացնելու ճյուղային նախարարությունների պատվերները: Այսինքն, ճյուղային հասկացությունն ինքը վերածվել է անհեթեթության: Ինչ վերաբերում է գիտության հիմնարար ուղղություններին, դրանք պետք է պահպանվեն և զարգացվեն. հիմնարար գիտությունը ցանկացած երկրի դեմքն է, բացի այդ, եթե մենք հրաժարվենք հիմնարար հետազոտություններից, չենք կարող պահել բուհական կրթության անհրաժեշտ մակարդակը:

Գիտության գերակա ճանաչված ուղղությունները պետք է ուղղված լինեն առաջին հերթին երկրի տնտեսության զարգացմանը: Մանավանդ, Հայաստանի նման բնական ռեսուրսներ չունեցող երկրի համար գիտության զարգացումը չափազանց կարևոր է: Մենք պետք է հենվենք մեր ինտելեկտուալ պոտենցիալի՝ մարդկային ռեսուրսների վրա: Եվ մեր գիտությունը պետք է լինի մրցունակ: Եթե այդպես չէ, դա ուղղակի գումարների զուր վատնում է: Պետք է բարձրացվի տեխնիկական անվտանգության մակարդակը. այսօր մեր հանրապետությունն ամեն ինչ ներմուծում է: Մենք չունենք առաջատար տեխնոլոգիաներ ապահովող ձեռնարկություններ: Հայաստանն այդ ասպարեզում պետք է դառնա մրցունակ երկիր: Խորհրդային շրջանում մենք մեծ հաջողություններ ունեինք միկրոէլեկտրոնիկայի, քիմիայի, ֆիզիկայի, համակարգչային տեխնիկայի զարգացման և արտադրության ասպարեզներում, և դա չպետք է անտեսել: Մեր ապագան, կարծում եմ, գիտատար արդյունաբերությունն է: Մենք լուրջ հաջողություններ կարող ենք ունենալ միկրոէլեկտրոնիկայի, նանոտեխնոլոգիաների, ճշգրիտ սարքաշինության ասպարեզներում: Նկատի առնելով դա, նաև առկա կադրերն ու գոյություն ունեցող դպրոցները՝ հնարավորինս արագ անհրաժեշտ է սահմանել մեր գիտական գերակայությունները: Շատ կարևոր են նաև համաշխարհային գիտական գերակայությունները, որովհետև Հայաստանը չի կարող մեկուսացված գոյություն ունենալ: Գիտության զարգացման համար նախատեսված միջնաժամկետ ծրագրով ՀՀ Կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն գումարներ է նախատեսել

համաշխարհային գերակայություն համարվող ասպարեզների համաֆինանսավորման համար:

Մարտ ամսին մենք համագործակցության պայմանագիր ստորագրեցինք Ռուսաստանի հիմնարար հետազոտությունների հիմնադրամի հետ: Համագործակցության թիրախային ասպարեզներն են լինելու նանոտեխնոլոգիաները, կենսատեխնոլոգիաները, էներգետիկան: Նմանատիպ փաստաթուղթ առաջիկայում կստորագրենք նաև Բելառուսի Հանրապետության հետ: Ժամանակին մեր հանրապետությունը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մի մասն էր, և մեր գիտության բոլոր ուղղությունները, այսպես թե այնպես, կազմում էին մեկ գիտակրթական տարածքի կարևորագույն մասը: Կարծում եմ՝ նախկին ավանդույթները հնարավորինս օպտիմալ ձևով անհրաժեշտ է օգտագործել: Մեր հաջորդ քայլը կլինի ինտեգրումը եվրոպական և համաշխարհային գիտակրթական տարածք: Դա նույնպես կամրագրվի համապատասխան պայմանագրերով: Կարևոր նշանակություն կունենա մոտ ժամանակներս մշակվելիք գիտության զարգացման ռազմավարական ծրագիրն առաջիկա 10-15 տարիների համար: Կարծում եմ՝ մինչև եկող տարվա ամառը կառավարությունը կհաստատի և այդ ծրագիրը: Ուզում եմ խոսել նաև գիտության արդյունքի առևտրայնացման խնդրի մասին: Ցավոք, անկախ Հայաստանում դրանով լուրջ չեն զբաղվել, չնայած ունենք լիազոր մարմին՝ ի դեմս Առևտրի և տնտեսական զարգացման նախարարության: Տարիներ շարունակ նորարարական գործունեությունը և գիտական արդյունքների առևտրայնացումը, որպես կանոն, սահմանափակվել է կոնկրետ գիտական արդյունքի վաճառքով: Մինչդեռ գիտական արդյունքի առևտրայնացումը միայն դա չէ: Որևէ հիմնարկի համար նույնիսկ գայթակղիչ թվացող ծրագիրը պետք է ապրանքային տեսքի բերել, որից հետո նոր հանել վաճառքի: Մեզ մոտ այդ միջանկյալ գործընթացը չի կազմակերպվում: Այսինքն, տեխնոպարկերի, գիտական ինկուբատորների աշխատանքը դեռևս հստակ չէ: Մեզանում շատ ցածր մակարդակի վրա են գիտական արդյունքների պատենտավորման, հեղինակային իրավունքի հարցերը: Այսինքն, նաև օրենսդրական կատարելագործման անհրաժեշտություն կա:

Ահա այս հարցերով պետք է զբաղվի գիտության պետական կոմիտեն, իսկ մոտ ապագայում՝ գուցե նախարարությունը: Պետք է մշակել սկզբունքներ, որոնք աշխարհին հայտնի են, մենք նոր հեծանիվ չենք հայտնագործելու:

Լուրջ քննարկման խնդիր է գիտական աստիճանաշնորհումը: Խորհրդային շրջանի հսկայական գիտակրթական տարածքի պարագայում Բարձրագույն որակավորման հանձնաժողովն արդյունավետ էր գործում: Փոքրիկ պետությունում, ինչպիսին մերն է, Բարձրագույն որակավորման հանձնաժողովի նման կառույցը, որը և՛ գիտական խորհուրդների աշխատակարգն է մշակում, և՛ փորձաքննություն իրականացնում, և՛ վերահսկողական գործառույթ ունի, չի կարող արդյունավետ աշխատել:

Կարծում եմ, որ գիտական աստիճանաշնորհման քաղաքականությունը պետք է մշակի ձևավորվելիք գիտության նախարարությունը: Պետք է դա իրականացնեն մասնագիտացված մրցակցությունը շահած խորհուրդները, ընդ որում՝ վերջիններիս աշխատակարգն ու ձևավորման կարգն այնպես պետք է մշակվի, որ աշխատանքն առավելագույնս օպտիմալ ու ազնիվ լինի:

Հապաղել այլևս չի կարելի: Առանց այն էլ մենք բավական ժամանակ ենք կորցրել: Ամեն ուշացած ամիսն ավելացնում է վատ հետևանքները: Մինչև այս տարվա կեսերը կավարտենք գույքագրումը, դրանից հետո գիտական հիմնարկների օպտիմալացում կիրականացնենք: Հսկայական մակերեսներ կան, որոնք պետությունն ուղղակի ի վիճակի չէ պահել, նույնիսկ էթե եռապատկեն մեզ հասանելիք բյուջեն: Իմ հաշվարկներով՝ տարեկան ավելի քան 50 միլիոն դոլար է անհրաժեշտ միայն այդ շենքերի

պահպանության համար:

Ուզում եմ շեշտել, որ ազատվելիք մակերեսներն օտարելը նպատակահարմար չէ: Այդ շենքերում կարելի է գիտակրթական կամ գիտաարտադրական փոքրիկ լաբորատորիաներ բացել: Կարելի է դրանք նորոգել ու վերածել հանրակացարանային համալիրների՝ արտասահմանցի ուսանողների համար: Հայաստանն այսօր լուրջ հնարավորություններ ունի գիտելիքի առևտրայնացման գործում շոշափելի արդյունքներ արձանագրելու: Մենք բավական որակյալ մարդկային ռեսուրսներ դեռևս ունենք, որոնք չօգտագործելն առնվազն խելամիտ չէ: Մենք կարող ենք մագիստրոսական և ասպիրանտական ուսուցում կազմակերպել արաբական աշխարհի, Հարավարևելյան Ասիայի երկրների քաղաքացիների համար: Ես մի քանի դեսպանների հետ զրուցել եմ ու համոզվել, որ դա հնարավոր է: Մի խոսքով, եթե մեր վարած քաղաքականությունը ճիշտ լինի, Հայաստանն ունի լուրջ հնարավորություններ և՛ մրցունակ գիտություն ունենալու, և՛ գիտելիքի առևտրայնացման գործում հաջողություններ արձանագրելու: Հարկ է մշակել գիտության վարչական կառավարման այնպիսի սկզբունքներ, որ գիտությամբ զբաղվելը լինի միաժամանակ հաճելի և օգտակար, իսկ գիտության զարգացումը դառնա ինքնակարգավորվող գործընթաց:

Կրկին շեշտեմ, որ Հայաստանն ունի որակյալ մարդկային ռեսուրս, և գիտությամբ զբաղվելը հայերիս գենետիկական հատկանիշն է: